

զիւղերում, ինչպէս՝ Բանանց («կաղնի խաչը»), Խաչակապ, Փիփ-  
և այլն:

Ժողովուրդը մի քանի ծառեր էլ անսուրբ է համարում և  
ղգուշանում է նրանցից. այսպէս ոջլի ծառը ոչ մի բանի գործ  
չեն անում. եթէ այդ ծառից կտրած ճիւղտով խփեն մի եղան-  
ասում են եղը փորացաւ կընկնի, եթէ նա մինի այգում բուս-  
նի, այգին անպտուղ կը մնայ, եթէ նրա մանրահատիկ պտղից,  
մինն ուտի՝ կը թունաւորուի \*):

### ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՋՏԱՄՈՒՆՔ

#### Ա. ԹՈՒՉՈՒՆՆԵՐ

Ինչպէս վարանդայում, այնպէս և Գանձակի գաւառում  
թուչունների պաշտամունքը մասամբ մնացել է: Մի քանի թըռ-  
չուններ սուրբ են համարւում, ժողովուրդը նրանց մեղք է հա-  
մարում սպանել, նրանց քար չի ձգում, նրանց բները չի քան-  
դում: Այսպիսի թուչուններից նշանաւոր է ծիծեռնակը. սրան  
ոչ միայն մի որևէ վնաս չեն հասցնում, այլ և նրանից խընդ-  
րում են, որ իրենց երեխաներին շուտ և ճարտար խօսելու շը-  
նորհք պարգևէ, որովհետև հաւատում են, որ նա էլ երբեմն  
մի ճարտար, քաղցրախօս երեխայ է եղել: Սրա խորթ մայրը  
ատելով նրան՝ մի օր հիւանդ է ձևանում, և պահանջում է  
ամուսնից, որ այս տղայի ճկույթ մատը կտրէ, եփէ, տայ իրեն  
ուտի, որպէսզի առողջանայ: Հայրը կատարել է այս չար կնոջ  
կամքը, կտրել է իւր երեխայի ճկույթը (ծիծեռնը), որի ցաւից  
նա մեռել է: Բայց երբ ճկույթը տարել է կնոջը, որ ուտի և  
առողջանայ, յանկարծ այս ճկույթը ծիծեռնակ է դառել և  
թռել երգելով.

Ծիծեռն եմ հա, ծիծեռն եմ,  
հօրը մորթած ծիծեռն եմ.  
Մօրը կերած ծիծեռն եմ,  
Թռեր ծիծեռնակ եմ դառէ:

\*) Արարատեան. Հիմնարկ. գաւ. ուսումնարանի. եր. 70:-

Ծիծեռնակին՝ տեղական թուրքերն էլ սուրբ են համարում և չեն սպանում: Սրանց մէջ էլ կան ականդութիւններ ծիծեռնակի մասին, որոնցից նշանաւոր է հետեւեալը.

Աստուած հրամայեց Աբրահամին գնալ Մեկկա և այնտեղ մի այնպիսի տաճար շինել, որպիսին Մովսէս շինեց Արուսի-դէմում: Աբրահամը կատարեց Աստուծոյ հրամանը, և բազմաթիւ ուխտաւորներ սկսեցին յաճախել այս տաճարը: Այս միջոցներում այդ երկրում բնակւում էր Ադ կոչուած ժողովուրդը, որի թագաւորը հրամայեց մեծ զօրքով գնալ և հիմնովին կործանել այդ տաճարը: Բայց երբ զօրքը մօտեցաւ տաճարին, հաւաքուեցան անթիւ ծիծեռնակներ, որոնք կտուցներով քարեր վերցնելով՝ ձգեցին զինուորների վրայ և բոլորին կտորեցին: Միայն ազատուեց մի զինուոր, որ գնաց և պատմեց այս դէպքը թագաւորին: Այնքինս չհաւատաց, բայց հէնց այս միջոցին երևաց մի ծիծեռնակ և մինչդեռ զինուորը կասէր. «Ահա, ահա, թագաւոր, նրանցից մինը», ծիծեռնակը ձգեց քարը նրա գլխին և սպանեց: Թագաւորը այս տեսնելով հրամայեց ալլա ձեռք չբռնալ տաճարին: Սրանից յետոյ Աստուած սովորեցրեց ծիծեռնակին երգել այն աղօթքը, որով զգուշացնում է մարդկանց սպանել ծիծեռնակին, որովհետեւ Աստուած մահուան պատիժ է տալիս ծիծեռնակին սպանողին:

Բացի ծիծեռնակից ժողովուրդը սուրբ է համարում նաև աղանուճ, որի մասին եղած կուսակաշտական ականդութիւններն անհետացել են և մնացել է միայն մովսիսականը: Երբ կամենում են մորթել աղանուճ, շատ անգամ խղճահարում են և չեն մորթում, որովհետեւ «նրա աչքերում արցունքներ են նկատում»:

Իբր չար կամ աւելի լաւ չարագուշակ թուչուն յարգում է Բու: Երբ նա բւում է մի տան կտրին, տնեցիներին թախիծ է պատում, ամէնքը հաւատում են, որ մի տխուր դէպք, յաճախ՝ մահ, պիտի պատահի: Զատերը այդպիսի դէպքերում փայտէ գշի մէջ կերակուր են ածում և դուրս բերում, տալիս նրան, որպէս զի չարիքը այլ ևս չպատահի: Միևնույն կերպ վարւում և հաւատում են թուրքերը: Սրանց կարծիքով բուն

ամենախմաստուն թռչունն է. սկզբներում նա նույն իսկ ընտանի է եղել, բայց յետոյ, երբ տեսել է, որ մարդիկ սպանում են մարգարէներին՝ վախեցել է, թէ մի զուգէ իրեն էլ սպանեն, ուստի և հեռացել է նրանցից և ապրել աւերակների մէջ: Եւ որովհետեւ նրա սիրելի տեղը աւերակներն են՝ ուստի և մի անգամ հարցրել են նրան, թէ աշխարհումս ինչն է աւելի, շինութիւնները թէ աւերակները: «Աւերակները, պատասխանել է նա, որովհետեւ ժամանակով բոլոր շինութիւններն էլ աւերակ պիտի դառնան»:

«Իսկ ռոնք են աւելի, կանայք, թէ տղամարդիկ»:— Կանայք, որովհետեւ կնոջ լսող տղամարդն էլ կին է:

Քուի մասին կայ հետեւեալ աւանդութիւնը.

Սհակ անունով մի տղայ իւր քրոջ հետ խօսքի տարուելով՝ կորցնում է իրենց եզը արածացնելիս: Երկար, ապարդիւն որոնելուց յետոյ տուն են դառնում և պատմում են իրենց խորթ մօրը կորստի մասին: Սա սաստիկ բարկանում է սրանց վրայ, անիծում և տանից դուրս անում, պատուիրելով չվերադառնալ առանց եղի:

Նորից երկար որոնելուց յետոյ՝ սրանք յուսահատուած դիմում են Աստծուն, որ իրենց թւեր տայ, որպէսզի աւելի հեշտութեամբ կարողանան որոնել: Աստուած լսում է դրանց խնդիրը, թւեր տալիս և բոլոր դարձնում: Դեռ մինչև այժմ էլ նրանք շարունակում են հարցնել միմեանց այսպէս.

«Սհակ»...

— Հէ!

«Գտա՞ր»

— Չէ:

Իսկ թուրքերը պատմում են հետեւեալ աւանդութիւնը.

Յակոբ լսելով Յովսէփի որդու կորուստը, կանչում է Ուուփ և Նասիր ծառաներին և ուղարկում նրան որոնելու: Սրանք երկար որոնելուց յետոյ խնդրում են Աստծուն իրենց թւեր տայ, որպէսզի հեշտութեամբ որոնեն: Աստուած տալիս է նրանց թւեր, նրանք թռչում են և որպէս զի միմեանց չք կորցնեն, շարունակ կանչում են.

Յուսուփ, Նասիր.

Յուսուփ, Նասիր.

Այս աւանդութիւնը շատ նման է Հետեւեալին, որ պատմւում է դարձեալ թուրքերի մէջ՝ յոպ-յոպի մասին.

Կար չկար երկու եղբայր, Յուսուփ և Նասիր անուններով. նրանք ունէին մի քոյր Ֆաթմա անունով, որ սովորութիւն ունէր գլխին սանր կրել: Մի անգամ նրանց ձին կորաւ և եղբայրները զնացին որոնելու նրան և պատուիրեցին քրոջը մինչև իրենց վերադարձը կերակուր պատրաստել: Նա եփեց կաթնապուր և երկար սպասեց եղբայրներին: Սպասեց, սպասեց, վերջապէս՝ անհանգստանալով զնաց նրանց որոնելու: Երկար, ապարդիւն կերպով որոնելուց յետոյ նա խնդրեց Աստծուն, որ իրեն թռչուն դարձնի, որպէսզի Հեշտութեամբ կարողանայ որոնել իւր սիրելի եղբայրներին: Ըստուած լսեց նրա աղօթքը և նրան յոպ-յոպ դարձրեց: Եւ մինչև այժմ էլ նա որոնում է իւր եղբայրներին կոչելով. «Յոպոպ, գիւլ թափ, Յուսուփ, Նասիր, սիւտյի աշ», այսինքն. Յոպոպ, վարդ գտիր, Յուսուփ, Նասիր, կաթնապուր: Երբ նա թռչուն դարձաւ, նրա Հայրական Ժառանգութիւնը մնաց գետնին, ուստի և այժմ, երբ նրան Հարցնում են, թէ Յոպոպ, ո՞ւր է քո Հայրական Հարստութիւնը, նա կտուցով խփում է գետնին, կարծես սրանով կամենում է ասել, թէ բոլոր Հայրական Հարստութիւնը մնաց գետնին:

Իսկ Հայերը յոպ-յոպի մասին բոլորովին այլ կերպ են պատմում.

Մի անգամ մի Հարս խմոր հունցելիս գործը կիսատ է թողնում և սկսում է գլուխը սանրել: Հագիւ սանրը խրում է մագերիի մէջ, երբ սկեսրալը վրայ է դալիս. ամօթից և հրկիւղից Հարսը թռչունի է փոխարկւում և սանրը գլխին թռչում:

Մտքեխ.—Երկիւղից պաշտում են *Դրեխի*: Երբ դրանք գալիս են մի գիւղ, բոլոր գիւղացիները սարսափած մեծ քանակութեամբ բրինձ են խաշում և լցնում նրանց առաջը, խնդրելով որ ուտեն և Հեռանան: Երկիւղ կրելով. չեն սպանում մորեխներին:

## Բ. Կ Ա Թ Ն Ա Ս Ո Ւ Ն Ն Ե Ր

ԶԱԼԱՆ.—Սա իմաստուն և սաստիկ շուտ նախազգող է համարւում: Նա ճանաչում է տան բարեկամին և չարակամին, նախազգում տանը գալիք դժբաղդութիւնը և ցաւակցելով՝ ունում, ուստի և մարդիկ լսելով նրա ունոցը տխրում են, գուշակելով, որ տնեցիներէից մինը պիտի մեռնի:

Հնդհանրապէս շանը չեն սպանում և նոյն իսկ գրող չեն չափում, մեղք համարելով այդ:

Պատմում էին, թէ մի անգամ չորս կին Մելիքենց տանը գորգ էին գործում օրական 10 կոպէկ վարձատրութեամբ: Սոնա անունով մի կին այդ վարձատրութիւնը քիչ համարելով սկսում է տանտիկնոջ բացակայութեան միջոցին գուգուել միւս կանանցը և առաջարկել այլևս չաշխատել, մինչև որ վարձը չբարձրացնեն: Այդ միջոցին շունը, որ բոլոր ժամանակ միքիչ հեռուն հանգիստ պառկած էր, առանց հաջելու յանկարծ յարձակւում է Սոնայի վրայ և կծում: Միքանի օր յետոյ, երբ գորգը աւարտելու վրայ են լինում, «սրրոգաթայ» (աւարտելու առիթով նուէր) են ուզում: Տանտիկինը փեթակի մեղրը կտրում է, լաւ մասը պահում, վատ մասը տալիս այս բան անող կանանց: Սոնան դարձեալ սկսում է վատ խօսել տանտիկնոջ մասին, նրա բացակայութեան միջոցին, բայց այս անգամն էլ նոյն իմաստուն և բարի կամեցող շունը լռելեան յարձակւում է Սոնայի վրայ և կծում նրան: Այս և այսպիսի շատ անցքեր համոզում են գլուղացիներին, որ շան ներկայութեամբ վատ չխօսեն նրա տիրոջ մասին: Մի աւանդութիւն ասում է, թէ Աստուած կենդանիներին ստեղծելիս գալլին հոտառութիւն տուեց, իսկ շանը՝ ոյժ: Գալլը յարձակուեց մի գոմէշի վրայ և ուզում էր պատառոտել նրան և երբ չկարողացաւ՝ դարձաւ Աստծու մօտ և խնդրեց իրեն ոյժ տալ և ո՛չ հոտառութիւն: Աստուած կատարեց նրա խնդիրը, առաւ նրանից հոտառութիւնը տուեց շանը, իսկ նրա ոյժը տուեց գալլին: Սակայն շունը նոյն հոտառութեամբ աւելի ապահով վիճակ ստեղծեց իւր համար, քան գալլը իւր ուժով:

Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ սկզբում գայլերն էին բնակւում մարդկանց մօտ, իսկ շները ապրում էին անտառում: Մի օր շները եկան խնդրեցին գայլերին, որ թույլ տան իրենց մնալ մարդկանց մօտ, մինչև որ կառողջանան, իսկ մինչ այդ իրենք գնան անտառները: Գայլերը մեղքացան հիւանդ շների վրայ և նրանց զիջան իրենց տեղը, սակայն շներին շատ դուր եկաւ մարդկանց կենակցութիւնը և չկամեցան այլևս վերադառնալ անտառը: Դեռ մինչև հիմայ էլ, գայլերն անտառից հարցնում են շներին. առողջացա՞ք, վերադարձե՞ք, իսկ սրունք ունում են իրենց ցաւերից տանջուիլը ցոյց տալու և հաջում՝ ասելու՝ թէ դեռ չեն լաւացել:

ԿԱՏՈՒ. — Նոյի տապանում ապաստանած միջոցին՝ առիւծը փռնջտացել է և նրա քթից ընկել է կառուկ: Այս պատճառով էլ սա նրան սաստիկ նման է\*):

Լաւ է մի մարդ սպանել, քան մի կատու:

Կատու սպանողը եօթը եկեղեցի պիտի շինի, որ մեղքից ազատուի:

ԱՐՋ. — Սա սկզբում մարդ է եղել, ջրաղացպան, բայց որովհետև անարգաբար է վերաբերուել դէպի հացահատիկները, այս պատճառով և արջի է կերպարանափոխուել:

ԿԱԱՅԻԿ. — Սա մի ժամանակ մարդ է եղել և ներկարարութեամբ (պոյաճութեամբ) պարապել: Սակայն աշխատելուց առաջ երբէք չէ խաչակնքուել և կամ աղօթել, ուստի և Աստուած անիծել է նրան և կապիկ դարձրել: Եւ այս է պատճառը, որ կապիկի եղունգները կապտագոյն են:

ՋՈՐԻ. — Յիսուս Երուսաղէմ գնալիս պատուիրեց իւր աշակերտներին, որ մօտակայ գիւղից մի էջ և մի ջորի բերեն: Նրանք էլ բերին: Քրիստոս նստաւ ջորու վրայ, բայց սա աքացի տուեց, ուստի և Տէրը անիծեց ջորուն ասելով, «Անիծեալ լինիս և չծնես երբէք»: Այդ ժամանակից սկսած ջորին դադարեց ծնելուց:

\*) Մինի սաստիկ նմանութիւնը ցոյց տալու համար ասում են. քթիցն ընկած է: